ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/07»
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ք.Երևան «07» մայիսի 2018 թ.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Ռ.Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և

«Բի-Դի-Օ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս ընկերության տնօրեն Վ. Սահակյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից,

Յուրաքանչյուրն առանձին այսուհետ՝ Կողմ, իսկ երկուսը միասին հիշատակման դեպքում՝ Կողմեր, կնքեցին սույն Պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

Հոդված 1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

i. **«Պայմանագիր»** - Ծառայությունների մատուցման Պայմանագիր,
ii. **«Ծառայություններ»** - Կատարողի կողմից Պատվիրատուի պահանջով Պայմանագրի և Համաձայնագր(եր)ի շրջանակներում մատուցվող Ծառայությունները: Մատուցվող Ծառայությունների նկարագրությունը տրվում է Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Տեխնիկական բնութագրում,
iii. **«Տեխնիկական բնութագիր»** - գնվող Ծառայությունների ամբողջական նկարագիր, որը բացառում է այլընտրանքային մեկնաբանությունը, ինչպես նաև գնվող Ծառայությունների անվանումը, Ծառայությունների հատկանիշը, չափման միավորը, քանակը, երաշխիքային ժամկետը, Ծառայությունների մատուցման վայրը, որակի, Ծառայությունների արդյունքների, ինչպես նաև դրանց հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը ներառող փաստաթուղթ (**Հավելված 1**),
iv. **«Գնման ժամանակացույց»** - Ծառայությունների մատուցման ժամանակահատված, որը ներառում է դրա սկիզբն ու ավարտը (**Հավելված 2**),
v. **«Ծառայությունների գին»** - այն գումարը, որը Պատվիրատուն պարտավորվում է վճարել Կատարողին Ծառայությունների պատշաճ, ամբողջական և լրիվ մատուցման համար, որը ներառում է ՀՀ օրենսդրությամբ կիրառելի բոլոր հարկերը: Պայմանագրի գինն իր մեջ ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը,
vi. **«Վճարման ժամանակացույց»** - այն ժամկետը, որի ընթացքում Պատվիրատուն պարտավոր է վճարել Գինը: Մասնավորապես, Վճարման ժամկետն է

Ծառայությունների պատշաճ, ամբողջական և լրիվ մատուցման վրա հիմնված հանձնման-ընդունման ակտի/արձանագրության երկկողմ ստորագրման պահից սկսած 30 աշխատանքային օր ժամկետը (**Հավելված 3**),

vii. «**Ակտ**» - Պայմանագրի մի մասի կատարման արդյունքի հանձնման-ընդունման վերաբերյալ կազմված, Կողմերի միջև ստորագրված փաստաթուղթ (**Հավելված 4**):

viii. «**Հանձնման-ընդունման արձանագրություն**» - Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը հաստատելու վերաբերյալ կազմված, Կողմերի միջև ստորագրված փաստաթուղթ (**Հավելված 5**),

ix. «**Պայմանագրի պայմաններ**» - Պայմանագրի առարկա, Վճարման ժամանակացույց, Պայմանագրի գին, որակ, Ծառայությունների մատուցման ժամկետ, երաշխիքային ժամկետ և այլն,

x. «**Ներկայացուցիչ**» - Պատվիրատուի և/կամ Կատարողի կողմից նշանակված և վերջիններիս կողմից լիազորված անձ, Պատվիրատուի ներկայացուցիչը Կատարողին (Կատարողի ներկայացուցչին) տալիս է Ծառայությունների մատուցման համապատասխան պատվեր-առաջադրանք, վերահսկում է վերջինիս գործունեությունը՝ Ծառայությունները պատվեր-առաջադրանքի շրջանակներում կատարելու մասով: Ներկայացուցիչը լիազորվում է Պատվիրատուի և/կամ Կատարողի (գլխավոր) տնօրենի կողմից տրված լիազորագրով:

Հոդված 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1. Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում մատուցել Պայմանագրի Տեխնիկական բնութագրով սահմանված **Աուդիտորական Ծառայություններ** (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել Ծառայությունների գինը՝ համաձայն Գնման ժամանակացույցի:

Հոդված 3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԵՎ/ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ) ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

3.1 Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունները Պատվիրատուին հանձնելու փաստը հաստատվում է Պայմանագրի Տեխնիկական բնութագրում նշված յուրաքանչյուր ենթակետով նախատեսված Ծառայության մատուցման ավարտից հետո Պատվիրատուի և Կատարողի միջև Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությամբ՝ նշելով դրա կազմման ամսաթիվը:

Պայմանագրով Ծառայությունների մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ մատուցված Ծառայությունները Պատվիրատուին հանձնելու փաստը հավաստող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով

(գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իրեն (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված Ծառայությունները համապատասխանում են Պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված Ծառայությունները կամ դրա մի մասը չեն համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունները կամ չի մերժում դրանց ընդունումը, ապա մատուցված Ծառայությունները համարվում են ընդունված և Պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

Հոդված 4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

4.1.1 Ցանկացած ժամանակ Ներկայացուցչի միջոցով վերահսկողություն իրականացնել Կատարողի կողմից մատուցվող Ծառայությունների ընթացքի և որակի նկատմամբ՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

4.1.2 Կատարողի կողմից Պայմանագրում նշված ժամկետի խախտման դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանել Ծառայությունների մատուցման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրով նախատեսված տույժը:

4.1.3 Չընդունել մատուցված Ծառայությունները՝ ՀՀ օրենսդրության և Պայմանագրի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ սահմանելով թերությունների անհատույց վերացման Կողմերի համար ընդունելի ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից 10 (տասը) օրվա ընթացքում վճարելու Պայմանագրով նախատեսված տույժը և տուգանքը:

4.1.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կատարողը ժամանակին չի սկսում Ծառայությունների մատուցումը, ինչի պատճառով Պայմանագրով նախատեսված ժամկետում ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կատարողի կողմից մատուցված Ծառայությունները չեն համապատասխանում Տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին,

գ) Կատարողը խախտել է Գնման ժամանակացույցը:

4.2. Պատվիրատուն պարտավոր է՝

4.2.1 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կատարողի մասնակցությամբ զննել և ընդունել մատուցված Ծառայությունները (դրա արդյունքը), իսկ դրա՝ Պայմանագրի Տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներից շեղումներ կամ այլ թերություններ հայտնաբերելու դեպքում՝ անհապաղ հայտնել Կատարողին.

4.2.3 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին տրամադրել Ծառայությունների մատուցման համար համապատասխան տարածք.

4.2.4 Պայմանագրով նախատեսված ժամկետում Ծառայությունների արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել Ծառայությունների գինը:

4.3. Կատարողն իրավունք ունի՝

4.3.1 Պայմանագրով նախատեսված ժամկետում մատուցված Ծառայությունների արդյունքը հանձնելու և Պատվիրատուի կողմից այն ընդունելու և հանձնաման- ընդունման արձանագրությունը ստորագրելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված Ծառայությունների գինը:

4.3.2 Պատվիրատուի կողմից Վճարման ժամանակացույցով նախատեսված ժամկետների խախտման դեպքում պահանջել վճարել Ծառայությունների գինը և Պայմանագրով նախատեսված տույժը:

4.4. Կատարողը պարտավոր է՝

4.4.1 Կատարել մատուցվող Ծառայությունների վերաբերյալ Պատվիրատուի ցուցումները, եթե դրանք չեն հակասում Պայմանագրի պայմաններին:

4.4.2 Ծառայությունների արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան անհապաղ տեղեկացնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Ծառայությունների արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

4.4.3 Ծառայությունների մատուցման ժամանակացույցով նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Ծառայությունների մատուցման նոր ժամկետ սահմանելու դեպքում, ապահովել Ծառայությունների մատուցումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել Պայմանագրով նախատեսված տույժը:

4.4.4 Պայմանագրով նախատեսված հիմքերով Պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել Պայմանագրով նախատեսված տուգանքը:

4.4.5 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

Հոդված 5.ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **7.200.000** (յոթ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, որից ԱԱՀ-ն կազմում է՝ **1.200.000** (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

5.2 Ծառայությունների մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն մատուցված Ծառայությունների դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի՝ Պայմանագրում նշված հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության և հաշիվ-ապրանքագրի հիման վրա՝ Վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և կարգով:

Հոդված 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում մատուցված Ծառայությունների որակի և Ծառայությունների մատուցման ժամանակացույցով նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ժամկետը խախտելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձել տույժ՝ կատարման ենթակա, սակայն չմատուցված Ծառայությունների գնի 1 (մեկ) տոկոսի չափով:

6.3 Պատվիրատուի կողմից Պայմանագրով նախատեսված ժամկետների խախտման համար Կատարողն իրավունք ունի Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկել տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարվող գումարների հետ:

6.5 Պայամանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը Կողմերին չի ազատում իրենց Պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

Հոդված 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների Աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Հոդված 8. ԿԻՐԱՌԵԼԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.2. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով՝ 15-օրյա ժամկետում: Նշված ժամկետում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով: Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Հոդված 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ

9.1. Պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման Պատվիրատուի նախաձեռնությամբ, նախապես, 3 (երեք) օր առաջ Կատարողին ծանուցելու միջոցով՝ պահպանելով Պայմանագրի 4.2 կետով նախատեսված իր պարտականությունը:

9.2. Պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման Կատարողի նախաձեռնությամբ, նախապես, 5 (հինգ) օր առաջ Պատվիրատուին ծանուցելու

միջոցով՝ չդադարեցնելով Պայմանագրի 4.4 կետով նախատեսված իր պարտականությունների կատարումը:

Հոդված 10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

10.2 Պայմանագրի շրջանակներում ծանուցումները վավեր են, եթե դրանք ուղարկվել են Կողմերին՝ փոստով (Պայմանագրի 11-րդ հոդվածում նշված հասցեներով) կամ էլեկտրոնային փոստով և ստորագրված են Կողմերի (նրանց ներկայացուցիչների) կողմից:

Կողմերը պարտավոր են միմյանց հայտնել Պայմանագրի գործողության ընթացքում իրենց հասցեն փոխելու մասին և նման հաղորդման բացակայության դեպքում ծանուցումներն ուղարկվում են նրանց վերջին հայտնի հասցեով և համարվում են հանձնված:

10.3 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ Համաձայնագիր կնքելու միջոցով: Համաձայնագրերը հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

10.4 Ծառայությունների մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում, սույն կետով սահմանված դեպքում Ծառայությունների մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև 30 օրացուցային օրով:

10.5. Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Սույն կետով սահմանված ծանուցումն ինտերնետային կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից Կատարողը համարվում է Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ պատշաճ ծանուցված:

10.6. Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները

կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

10.7. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

10.8 Պայմանագիրը բաղկացած է հետևյալ հավելվածներից.

Հավելված 1 – Տեխնիկական բնութագիր,

Հավելված 2 – Գնման ժամանակացույց,

Հավելված 3 – Վճարման ժամանակացույց,

Հավելված 4 – Պայմանագրի մի մասի կատարման արդյունքի հանձնման-ընդունման ԱԿՏ,

Հավելված 5 – Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը հաստատելու վերաբերյալ Հանձնման-ընդունման ակտ:

Հոդված 11. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	**«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ**
Հասցե՝ ք. Երևան, Զ.Անդրանիկի 1	Հասցե՝ ք. Երևան, Խանջյան 50,
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Մալաթիա» մ/ճ	Թեքեյան Կենտրոն
Հ/Հ 1150001172630300	«Ամերիա Բանկ» ՓԲԸ Գլխամաս
ՀՎՀՀ 01522459	Հ/Հ 1570013745270100
	ՀՎՀՀ 01569792
_____ Ռ.ԽԱՉԱՏՐՅԱՆ	_____ Վ.ՍԱՀԱԿՅԱՆ
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված N 1
«07» 05 2018 թ. կնքված
ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/07 *ծածկագրով Պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Ծառայություններ ի անվանումը	Ծառայությունների նկարագիր	Քանակը	Արժեքը (ՀՀ դրամ) ներառյալ՝ ԱԱՀ-ն
Աուդիտորական ծառայություններ	**Նպատակը** Ընկերության ֆինանսական հաշվետվութ-յունների աուդիտի նպատակն է աուդիտորին թույլ տալ կարծիք հայտնել ըստ Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից հրապարակվող Ֆինանսական Հաշվետվութ-յունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ) հիման վրա կազմված «ԲԷՑ» ՓԲԸ (համախմբված) ֆինան-սական հաշվետվությունների վերաբերյալ: Ըստ ՀՀՄՍ 1-ի՝ ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթը ներառում է հետևյալ բաղադրիչները. (ա) Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ տարվա վերջի դրությամբ, (բ) Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին համախմբված հաշվետվություն՝ տվյալ տարվա համար, (գ) Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն՝ տվյալ տարվա համար, (դ) Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն՝ տվյալ տարվա համար, (ե) ծանոթագրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագրից և այլ բացատրական տեղեկատվությունից, ինչպես նաև համաձայն ՀՀՄՍ 1-ի նախորդ ժամանակաշրջանի վերաբերյալ համադրելի տեղեկատվություն, (զ) ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ համադրելի ամենավաղ ժամանակաշրջանի սկզբի դրությամբ, երբ կազմակերպությունը հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվում է հետընթաց, կամ կատարում է իր կառույցը ֆինանսական հաշվետվությունների հոդվածների հետընթաց վերահաշվարկ, կամ երբ վերադասակարգում է նախկին ֆինանսական հաշվետվությունների	1	7.200.000

	հոդվածները: «ԲԷՑ» ՓԲԸ հաշվապահական գրանցումները հանդիսանում են ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմք և կատարվում են ֆինանսական գործարքների արտացոլման նպատակով: Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման պատասխանատվությունը Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, ներառյալ տեղեկատվության բավարար բացահայտումը, պատասխանատու է ընկերության ղեկավարությունը: Սա ներառում է համարժեք հաշվապահական գրառումների պահպանումը և ներքին հսկողության իրականացումը, հաշվապահական քաղաքականության ընտրությունն ու կիրառությունը և ծրագրի ակտիվների պահպանումը: Որպես աուդիտի գործընթացի մաս՝ աուդիտորները պետք է ղեկավարությունից պահանջեն գրավոր հաստատում աուդիտի իրականացման փաստի վերաբերյալ: **Ծառայությունների ծավալը** Աուդիտը կիրականացվի համաձայն Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի (ՀՄՖ) Աուդիտի և հավաստիացման ստանդարտների միջազգային խորհրդի հրապարակած Աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ): Այդ ստանդարտները պահանջում են, որպեսզի աուդիտորն աուդիտը պլանավորի և իրականացնի այնպես, որպեսզի ստացվի բավարար հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները զուրկ են նշանակալի անճշտություններից: Աուդիտի ընթացքում ընտրանքային եղանակով ուսումնասիրվում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարներն ու բացահայտումները հիմնավորող փաստերը: Աուդիտը ներառում է նաև օգտագործված հաշվապահական սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված հիմնական գնահատականների գնահատում, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատում: ԱՄՍ-ին համապատասխանությունն ապահովելու ընթացքում աուդիտորը հատկապես պետք է ուշադրություն դարձնի հետևյալ խնդիրներին, ներառյալ պետական ոլորտի մարմիններին վերաբերող հատուկ նկատառումները. ա) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 240-ի		

	(Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ժամանակ խարդախության դեպքերի հետ կապված աուդիտորի պարտականությունները)՝ աուդիտի պլանավորման և իրականացման ընթացքում աուդիտի ռիսկը մինչև ընդունելի մակարդակը նվազեցնելու նպատակով աուդիտորը պետք է հաշվի առնի խարդախության պատճառով ֆինանսական հաշվետվություններում տեղ գտած նշանակալից անճշտությունների ռիսկերը: բ) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 250-ի (Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ժամանակ օրենքների և օրենսդրական դաշտի պահանջների կատարումը)՝ աուդիտի գործընթացի պլանավորման և իրականացման, ինչպես նաև արդյունքների գնահատման և ներկայացման ժամանակ աուդիտորը պետք է հաշվի առնի, որ կառույցի կողմից օրենքների և կարգավորման դաշտի պահանջների չկատարումը կարող է էապես ազդել ֆինանսական հաշվետվությունների վրա: գ) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 260-ի (Ընկերության կառավարման համար պատասխանատուներին աուդիտի հետ կապված խնդիրների մասին հաղորդում)՝ աուդիտորը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ժամանակ ընկերության կառավարման մարմնին պետք է տեղեկացնի կառավարչական հետաքրքրություն ներկայացնող խնդիրների մասին; դ) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 265-ի (Կառավարման և ղեկավարման համար պատասխանատուներին ներքին հսկողության բացթողումների մասին տեղեկացում)՝ աուդիտորը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ժամանակ ներքին հսկողության հայտնաբերված թերությունների մասին պետք է պատշաճ կերպով տեղեկացնի կառավարման և ղեկավարման համապատասխանատուներին: ե) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 330-ի (Աուդիտորի ընթացակարգերը գնահատված ռիսկերին արձագանքելիս)՝ Աուդիտի ռիսկն ընդունելի մակարդակի նվազեցնելու նպատակով աուդիտորը պետք է որոշի իր արձագանքը ֆինանսական հաշվետվությունների մակարդակով գնահատված ռիսկերի նկատմամբ և պնդումների մակարդակով գնահատված ռիսկերին արձագանքելու նպատակով մշակի և իրականացնի աուդիտի լրացուցիչ ընթացակարգեր: զ) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 402-ի (Աուդիտի նկատառումները ծառայություններ մատուցող ընկերություն ներգրաված կառույցի		

	վերաբերյալ)՝ այն դեպքերում, երբ տվյալ կառույցի գործառնությունների մի մասն իրականացնում է ծառայություններ մատուցող երրորդ կողմը, ապա աուդիտորը աուդիտի գործընթացի ժամանակ պետք է ներառի ծառայություններ մատուցող ընկերության ներքին հսկողության միջավայրին վերաբերող նկատառումներ և գնահատականներ: է) Ըստ Աուդիտի միջազգային ստանդարտ 580-ի (գրավոր ներկայացում)՝ որպես աուդիտի գործընթացի բաղկացուցիչ՝ աուդիտորը ընկերության ղեկավարությունից կամ, համապատասխան դեպքերում, կառավարող մարմնից պետք է ստանա աուդիտի փաստն արձանագրող նամակ: **Ծառայությունների լրացուցիչ ծավալը** Աուդիտորը պետք է պարտադիր ուսումնասիրի և եզրակացություն ներկայացնի միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող վարկային ծրագրերի նպատակային օգտագործման վերաբերյալ՝ ստորև ներկայացված վարկային համաձայնագրերի համաձայն: Գերմանիայի Դաշնային Հանրապետության Վերականգնման վարկերի բանկի (KFW), Հայաստանի Հանրապետության և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ միջև 30.01.2009թ-ին ստորագրված «Ծրագրի ֆինանսավորման և վարկի տրման» Պայմանագիր: Ծրագիր՝ «Գյումրի-2» 220/110/10կՎ ենթակայանի վերականգնում (BMZ 2007.66.253): Վարկի գումարը՝ 14.600.000,0 (տասնչորս միլիոն վեց հարյուր հազար) եվրո: Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՀԲ) միջև 2011թ. հունիսի 01-ին ստորագրված «Էլեկտրամատակարարման հուսալիություն» ծրագիր N 8055-AM համաձայնագիր: Վարկի գումարը՝ 39.000.000 (երեսունինը միլիոն) ԱՄՆ դոլար: Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի («Համաշխարհային բանկ») միջև 2014թ. օգոստոսի 6-ին ստորագրված «Էլեկտրամատակարարման հուսալիություն ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» ծրագիր N 8388-AM վարկային Համաձայնագիր: Վարկի գումարը՝ 40.000.000 (քառասուն միլիոն) ԱՄՆ դոլար: Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի և ՀՀ Կառավարության միջև 2015թ. ապրիլի 8-ին ստորագրված «Էլեկտրահաղորդման ցանցի բարելավում» ծրագիր N 8495-AM Վարկային		

	համաձայնագիր: Վարկի գումարը՝ 52.000.000 (հիսուներկու միլիոն) ԱՄՆ դոլար, որից «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ մասնաբաժինը կազմում է 21.794.486 ԱՄՆ դոլար: KfW բանկի, ՀՀ Ֆինանսների նախարարության և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ Ընկերության միջև 2014թ. դեկտեմբերի 9-ին ստորագրված «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց – I (Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ)» ծրագիր N BMZ ID: 2007 66 352 Վարկային և Ծրագրային համաձայնագիր: Վարկի գումարը՝ 10.200.000 (տասը միլիոն երկու հարյուր հազար) եվրո: KfW բանկի, ՀՀ Ֆինանսների նախարարության և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ Ընկերության միջև 2014թ. դեկտեմբերի 9-ին ստորագրված «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց – I (Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ)» ծրագիր N BMZ ID: 2012 66 949 Վարկային և Ծրագրային համաձայնագիր: Վարկի գումարը՝ 75.000.000 (յոթանասունհինգ միլիոն) եվրո: Հայաստանի Հանրապետության և Ասիական Զարգացման Բանկի միջև 2014թ. սեպտեմբերի 5-ին ստորագրված «Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցում» ծրագիր N 3150-ARM(SF) վարկային համաձայնագիր: Վարկի գումարը՝ 15.192.000 (տասնհինգ միլիոն հարյուր իննսուներկու հազար) SDR: KfW բանկի, ՀՀ Ֆինանսների նախարարության և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ Ընկերության միջև 2015թ. դեկտեմբերի 11-ին ստորագրված «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց – I (Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ/ենթակայաններ)» ծրագիր N BMZ ID 2014 68 735) Վարկային և Ծրագրային համաձայնագիր: Վարկի գումարը՝ 83.000.000 (ութսուներեք միլիոն) եվրո: Հայաստանի Հանրապետության և Եվրոպական ներդրումային Բանկի միջև 2015թ. մարտի 16-ին ստորագրված «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց» ծրագրի ֆինանսական Պայմանագիր: Վարկի գումարը՝ 10.000.000 (տասը միլիոն) Եվրո: KfW բանկի, ՀՀ Ֆինանսների նախարարության և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ Ընկերության միջև 2016թ. մայիսի 30-ին ստորագրված «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց – I (Հայաստան-Վրաստան հաղորդիչ գիծ և ԲԼՀՀ կայան)» Ֆինանսավորման և Ծրագրի Իրականացման համաձայնագիր: Դրամաշնորհի		

	գումարը՝ 10.000.000 (տասը միլիոն) եվրո: Աուդիտորը պետք է հաստատի նաև, որ բացառությամբ ՎՀՄԲ -ի հետ համաձայնեցված դեպքերի, «ԲԷՑ» ՓԲԸ-ն չի կարող կուտակել նոր պարտքեր, քանի դեռ «ԲԷՑ» ՓԲԸ-ի եկամուտների և ծախսերի հիմնավորված կանխատեսումները ցույց չեն տա, որ այդ պարտքի գոյացման ընթացքում յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար «ԲԷՑ» ՓԲԸ-ի կողմից կանխատեսված զուտ եկամուտները առնվազն 1.2 անգամ գերազանցում են այդ տարվա բոլոր պարտքերին՝ ներառյալ «ԲԷՑ» ՓԲԸ-ի կողմից կուտակվելիք պարտքերի սպասարկման համար պահանջվող գումարը: Այս մասի նպատակների համար՝ «Պարտք» նշանակում է «ԲԷՑ» ՓԲԸ-ի ցանկացած պարտք, որը պետք է մարվի պարտքի առաջացման պահից մեկից ավելի տարիների ընթացքում: Պարտքը համարվում է ձևավորված. (Ա) համաձայն այդ վարկի տրամադրման վարկային Պայմանագրի, համաձայնագրի կամ այլ փաստաթղթի, կամ էլ նմանօրինակ պարտքի կամ Պայմանագրի, համաձայնագրի, փաստաթղթի՝ վճարման ժամկետների փոփոխության, և (Բ) երաշխավորող համաձայնագրով՝ այդ երաշխիքն ապահովող համաձայնագրի կնքման օրը: «Զուտ եկամուտներ»-ը տարբերությունն է հետևյալների միջև. (ա) Գործառնական գործունեության հետ կապված բոլոր աղբյուրներից ստացվող եկամուտների և զուտ ոչ-ընթացիկ եկամուտների հանրագումարի, և (բ) Գործառնական գործունեության հետ կապված բոլոր ծախսերի հանրագումարի, ներառյալ՝ վարչական, շահագործման ծախսերը, հարկերն ու այլ պարտադիր վճարները, բացառությամբ մաշվածության և այլ ոչ դրամական հոդվածների ծախսերի: «Զուտ ոչ գործառնական եկամուտ»-ը տարբերությունն է հետևյալների միջև. (ա) գործառնական գործունեությունից բացի բոլոր աղբյուրներից ստացված եկամուտների, և (բ) (ա) կետում նշված եկամուտների ստացմանն ուղղված ծախսերի՝ ներառյալ հարկերն ու այլ պարտադիր վճարները: «Պարտքի սպասարկումը» պարտքի տոկոսների վճարումների և մայր գումարների մարումների ընդհանուր գումարն է, ինչպես նաև վարկի հետ կապված այլ վճարումները, եթե այդպիսիք կան: «Հիմնավորված կանխատեսում» նշանակում է		

	«ԲԷՑ» ՓԲԸ-ի կողմից կազմված նվազագույնը տասներկու ամսյա կանխատեսում՝ նախքան նոր պարտքի ձևավորումը, ինչը թե՛ Բանկը, և թե՛ «ԲԷՑ» ՓԲԸ-ն համարում են հիմնավորված, և ինչի վերաբեյալ Բանկը իրազեկել է «ԲԷՑ» ՓԲԸ-ին դրա ընդունելի լինելու մասին, պայմանով, որ այդ իրազեկումից հետո ոչինչ տեղի չի ունեցել, որը կարող է կամ էլ կարելի է տրամաբանորեն ակնկալել, որ ապագայում բացասական ազդեցություն կունենա «ԲԷՑ» ՓԲԸ-ի ֆինանսական վիճակի կամ աշխատանքի հետագա արդյունքների վրա: Երբ Սույն մասի նպատակներով անհրաժեշտ կլինի մեկ ուրիշ արժույթով վճարման ենթակա պարտքը գնահատել Վարկառուի հիմնական հաշվառման արժույթով, նման գնահատումը պետք է կատարվի այդ գնահատման ժամանակ արժույթի փոխանակման այնպիսի փոխարժեքով, որով կարելի է գումարը փոխարկել պարտքի մարման նպատակներով, կամ էլ նման փոխարժեքի բացակայության դեպքում՝ Բանկի համար ընդունելի փոխարժեքով: «ԲԷՑ» ՓԲԸ-ի ֆինանսական վիճակի գնահատականը նվազագույնը պետք է ներառի «Նպատակը» պարագրաֆում նշված դրույթները: **Աուդիտորական հաշվետվություններ** Աուդիտորը 2017թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ «ԲԷՑ» ՓԲԸ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ պետք է աուդիտորական կարծիք ներկայացնի՝ նշելով, թե արդյո՞ք այդ ֆինանսական հաշվետվություններն ըստ Հաշվապահական միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Միջազգային ֆինանսական հաշվետվության ստանդարտների, ապահովում են ընկերության ֆինանսական վիճակի և գործառնական արդյունքների վերաբերյալ ճշմարիտ պատկերը 31.12.2017թ. ֆինանսական տարվա ավարտի դրությամբ: Աուդիտորը պետք է հայտնի նաև (կարող է ներառել նաև լուսաբանող պարբերություն), որ վարկային միջոցները օգտագործվել են ըստ իրենց նպատակների և հաստատի, որ բացառությամբ ՎԶՄԲ -ի հետ համաձայնեցված դեպքերի, «ԲԷՑ» ՓԲԸ-ն չի կարող կուտակել նոր պարտքեր, քանի դեռ «ԲԷՑ» ՓԲԸ-ի եկամուտների և ծախսերի հիմնավորված կանխատեսումները ցույց չեն տա, որ այդ պարտքի գոյացման ընթացքում յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար «ԲԷՑ» ՓԲԸ-ի կողմից կանխատեսված զուտ եկամուտները		

	առնվազն 1.2 անգամ գերազանցում են այդ տարվա բոլոր պարտքերին՝ ներառյալ «ԲԷՑ» ՓԲԸ-ի կողմից կուտակվելիք պարտքերի սպասարկման համար պահանջվող գումարը: Աուդիտորը պետք է հայտնի վերը նշվածի անհամապատասխանության ցանկացած դեպքի մասին: Բացի դրանից, աուդիտորը պետք է իր աուդիտորական հաշվետվության մեջ առանձին մասով ներկայացնի «Այլ իրավական և կարգավորող պահանջների վերաբերյալ Հաշվետվություն»: Ի հավելումն Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական կարծիքի, աուդիտորը պետք է պատրաստի նաև ղեկավարությանն ուղղված նամակ, որում աուդիտորը պետք է. ա) ներկայացնի աուդիտի ընթացքում ուսումնասիրված հաշվապահական գրանցումների, համակարգերի և ներքին հսկողության մեխանիզմների վերաբերյալ իր մեկնաբանություններն ու դիտարկումները, բ) նույնականացնի համակարգերի և հսկողության մեխանիզմների թերություններն ու թույլ օղակները և կատարի դրանց բարելավմանն ուղղված առաջարկություններ, գ) ներկայացնի ֆինանսական համաձայնագր(եր)ի դրույթների խախտման դեպքերը, դ) ներկայացնի այն խնդիրները, որոնք ի հայտ են եկել աուդիտի ընթացքում և կարող են էական ազդեցություն ունենալ ծրագրերի իրականացման վրա, ե) վարկառուի ուշադրությունը հրավիրի բոլոր մնացած այն խնդիրների վրա, որոնք աուդիտորի տեսանկյունից կարևոր են, զ) ղեկավարությանն ուղղված նամակում ներառի ղեկավարության դիտողությունները, է) Եթե վերը նշվածին համապատասխան առաջարկություններ չկան և նամակ ղեկավարությանը չի պատրաստվել, ապա աուդիտորը պետք է գրությամբ հավաստի, որ աուդիտորի կողմից աուդիտի ընթացքում ուշադրության արժանի ոչինչ չի բացահայտվել: Ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ աուդիտորի կարծիքը և ղեկավարությանն ուղղված նամակը պետք է տրամադրվի «ԲԷՑ» ՓԲԸ աուդիտի ենթարկված ֆինանսական տարվա ավարտից հետո ոչ ուշ, քան մինչև 10.05.2018թ.: ԲԷՑ ՓԲԸ ունի իրավական պարտավորություն դրա երկու օրինակը Համաշխարհային Բանկին տրամադրելու համար:		

	Տեղեկատվության հասանելիություն Համաձայն «Համաշխարհային բանկի տեղեկատվության հասանելիության մասին քաղաքականության», որը գործում է 2010թ-ի հուլիսի 1-ից և որի ազդեցությունը տարածվում է բոլոր այն ծրագրերի վրա, որոնց բանակցությունների հրավերներն ուղարկվել են 2010թ-ի հուլիսի 1-ին կամ դրանից հետո՝ Բանկը պահանջում է որպեսզի Վարկառուն ժամանակին և Բանկի համար ընդունելի եղանակով հրապարակի աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները: Բացի այդ, նշված ֆինանսական հաշվետվությունները Վարկառուից ստանալուց հետո, Բանկը՝ համաձայն իր վերոնշյալ քաղաքականության պահանջների, դրանք նույնպես դարձնում է հանրամատչելի: Տեղեկատվության հրապարակման տեսանկյունից ղեկավարությանն ուղղված նամակները, հատուկ աուդիտները (այն է՝ ոչ ֆինանսական բնույթի) և աուդիտ չանցած ֆինանսական հաշվետվությունները (օրինակ՝ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները) չեն համարվում աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների մաս: Բանկը կարող է բացառիկ դեպքերում համաձայնել, որ Վարկառուն չհրապարակի աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների փաթեթը, եթե այն պարունակում է առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկատվություն: Նույնիսկ, այս դեպքում Վարկառուն պարտավոր է հրապարակել աուդիտ անցած հաշվետվությունների հակիրճ տարբերակը Բանկին ընդունելի եղանակով: Բացառությունները հաստատվում են Բանկի ղեկավարության կողմից: **Ընդհանուր** Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և պատշաճ հրապարակման համար պատասխանատու է «ԲԷՑ» ՓԲԸ ղեկավարությունը: Որպես աուդիտի գործընթացի մաս, աուդիտորը ղեկավարությունից կպահանջի գրավոր հաստատում աուդիտորին աուդիտի հետ կապված ներկայացումների համար: Աուդիտորի համար պետք է առանց սահմանափակումների հասանելի լինի ամբողջ տեղեկատվությունը և աուդիտորին պետք է տրամադրվեն աուդիտի իրականացմանը նպաստող բոլոր պարզաբանումները, ներառյալ իրավական փաստաթղթերը, ծրագրի նախապատրաստման և վերահսկողության		

	Տեղեկատվության հասանելիություն Համաձայն «Համաշխարհային բանկի տեղեկատվության հասանելիության մասին քաղաքականության», որը գործում է 2010թ-ի հուլիսի 1-ից և որի ազդեցությունը տարածվում է բոլոր այն ծրագրերի վրա, որոնց բանակցությունների հրավերներն ուղարկվել են 2010թ-ի հուլիսի 1-ին կամ դրանից հետո՝ Բանկը պահանջում է որպեսզի Վարկառուն ժամանակին և Բանկի համար ընդունելի եղանակով հրապարակի աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները: Բացի այդ, նշված ֆինանսական հաշվետվությունները Վարկառուից ստանալուց հետո, Բանկը՝ համաձայն իր վերոնշյալ քաղաքականության պահանջների, դրանք նույնպես դարձնում է հանրամատչելի: Տեղեկատվության հրապարակման տեսանկյունից ղեկավարությանն ուղղված նամակները, հատուկ աուդիտները (այն է՝ ոչ ֆինանսական բնույթի) և աուդիտ չանցած ֆինանսական հաշվետվությունները (օրինակ՝ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները) չեն համարվում աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների մաս: Բանկը կարող է բացառիկ դեպքերում համաձայնել, որ Վարկառուն չհրապարակի աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների փաթեթը, եթե այն պարունակում է առևտրային գաղտնիք հանդիսացող տեղեկատվություն: Նույնիսկ, այս դեպքում Վարկառուն պարտավոր է հրապարակել աուդիտ անցած հաշվետվությունների հակիրճ տարբերակը Բանկին ընդունելի եղանակով: Բացառությունները հաստատվում են Բանկի ղեկավարության կողմից: **Ընդհանուր** Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և պատշաճ հրապարակման համար պատասխանատու է «ԲԷՑ» ՓԲԸ ղեկավարությունը: Որպես աուդիտի գործընթացի մաս, աուդիտորը ղեկավարությունից կպահանջի գրավոր հաստատում աուդիտորին աուդիտի հետ կապված ներկայացումների համար: Աուդիտորի համար պետք է առանց սահմանափակումների հասանելի լինի ամբողջ տեղեկատվությունը և աուդիտորին պետք է տրամադրվեն աուդիտի իրականացմանը նպաստող բոլոր պարզաբանումները, ներառյալ իրավական փաստաթղթերը, ծրագրի նախապատրաստման և վերահսկողության		

	հաշվետվությունները, ուսումնա-սիրության և հետաքննական հաշվետվությունները, նամակագրությունը և վարկային հաշվի հետ կապված տեղեկատվությունը: Աուդիտորը կարող է նաև պահանջել Բանկային գրանցումներում արտացոլված գումարների հատկացման և մնացորդների վերաբերյալ գրավոր հաստատում: Ներգրավվածության այս պայմանը կմնա ուժի մեջ հետագա ֆինանսական տարիների համար, եթե չվերացվի, չփոփոխվի կամ չդադարեցվի: Աուդիտորը պետք է գիտակցի, որ Համաշխարհային բանկի ծրագրերի շրջանակում պատրաստված նյութերը ենթակա են Փոխառուի և/կամ Բանկի համապատասխան աշխատակիցների կողմից ուսումնասիրության:		

ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Կատարողը պետք է ընդգրկված լինի Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի համար ամբողջովին ընդունելի իրավասու անկախ աուդիտորների ցանկում:
2. Կատարողը պետք է ունենա ՀՀ-ում աուդիտորական ծառայություններ իրականացնելու լիցենզիա:

Ծառայությունների մատուցման վայրը	ք. Երևան, Զորավար Անդրանիկի փողոց 1

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ.Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Մալաթիա» մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

_____ **Ռ.ԽԱՉԱՏՐՅԱՆ**
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Խանջյան 50,
Թեքեյան Կենտրոն
«Ամերիա Բանկ» ՓԲԸ Գլխամաս
Հ/Հ 1570013745270100
ՀՎՀՀ 01569792

_____ **Վ.ՍԱՀԱԿՅԱՆ**
(ստորագրություն)

Հավելված N 2
«07» 05 2018 թ. կնքված
ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/07 *ծածկագրով Պայմանագրի*

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայությունների մատուցման ժամկետը	
Ծառայությունների մատուցման սկիզբը	**Ծառայությունների մատուցման ավարտը**
Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	մինչև 20.05.2018 թվականը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ.Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Մալաթիա» մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

Ռ.ԽԱՉԱՏՐՅԱՆ
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Խանջյան 50,
Թեքեյան Կենտրոն
«Ամերիա Բանկ» ՓԲԸ Գլխամաս
Հ/Հ 1570013745270100
ՀՎՀՀ 01569792

Վ.ՍԱՀԱԿՅԱՆ
(ստորագրություն)

Հավելված N 3
«07» 05 2018 թ. կնքված
***ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/07** ծածկագրով Պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Վճարման պայմաններ	Երկկողմ ստորագրված հաշիվ-ապրանքագրի և հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, հանձնման-ընդունման արձանագրության երկկողմանի ստորագրվելուց հաշվված 30 աշխատանքային օրվա ընթացքում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Զ.Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Մալաթիա» մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, Խանջյան 50,
Թեքեյան Կենտրոն
«Ամերիա Բանկ» ՓԲԸ Գլխամաս
Հ/Հ 1570013745270100
ՀՎՀՀ 01569792

Վ.ՍԱՀԱԿՅԱՆ
(ստորագրություն)

Հավելված 4
« 07 » 05 2018 թ. կնքված
ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/07 *ծածկագրով Պայմանագրի*

ԱԿՏ №
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

Սույնով արձանագրվում է, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Պատվիրատու) և _____ (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N ***ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/07*** Պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ____ _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված Ծառայությունները.

Ծառայությունների անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց **Ընդունեց**

_____ _____
ազգանուն, անուն ազգանուն, անուն

_____ _____
ստորագրություն ստորագրություն

Հավելված 5
«07» 05 2018թ. կնքված
***ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/07** ծածկագրով Պայմանագրի*

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № ____
Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու
փաստը հաստատելու վերաբերյալ

ք.Երևան «___» _____2018 թ.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Ռ.Խաչատրյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, **և**

«Բի-Դի-Օ» (այսուհետ՝ «Կատարող»)՝ ի դեմս տնօրեն Վ. Սահակյանի, ով գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

Յուրաքանչյուրն առանձին այսուհետ «Կողմ», իսկ երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր», հիմք ընդունելով № **ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/07** ծառայությունների մատուցման Պայմանագիրը, կնքեցին սույն Հանձնման-ընդունման արձանագրությունը՝ հետևյալի մասին.

(1) Կատարողը հանձնում է, իսկ Պատվիրատուն ընդունում թիվ _____ Պայմանագրով նախատեսված _____ Ծառայությունները՝
(Ծառայության նկարագիր)

(2) Պատվիրատուն հավաստում է, որ Հանձնման-ընդունման արձանագրության ստորագրման պահին Ծառայությունները կատարված են Պայմանագրի բոլոր պայմանների պահպանմամբ և որ Պատվիրատուն չունի որևէ պահանջ՝ կապված Ծառայությունների կատարման հետ:

(3) Կողմերը հավաստում են, որ Հանձնման-ընդունման արձանագրության ստորագրման պահին միակ պարտականությունը Պայմանագրով Սահմանված Ծառայությունների ամբողջ Գնի՝ _____ ՀՀ դրամի վճարման պարտականությունն է:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ	**«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ**
Հասցե՝ ք. Երևան, Զ.Անդրանիկի 1	Հասցե՝ ք. Երևան, Խանջյան 50,
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Մալաթիա» մ/ճ	Թեքեյան Կենտրոն
Հ/Հ 1150001172630300	«Ամերիա Բանկ» ՓԲԸ Գլխամաս
ՀՎՀՀ 01522459	Հ/Հ 1570013745270100
	ՀՎՀՀ 01569792
_____ **Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**	_____ **Վ.ՍԱՀԱԿՅԱՆ**
(ստորագրություն)	(ստորագրություն)